ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2019 թ.

«PARA TV»-ի լրագրող
Անուշ Մուրադյանին

Ի պատասխան Ձեր 13.12.2019թ.-ի գրությանը

Հարգելի տիկին Մուրադյան

ՀՀ Լոռու մարզպետին և փոխմարզպետին վճարված պարգևատրման գործընթացը իրականացվում է գաղտնի ընթացակարգով, ուստի դրա վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել չենք կարող: Սակայն հիշյալ պաշտոնատար անձինք ամեն տարի ներկայացնում են եկամուտների հայտարարագիր, ուստի վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրերից:

2019 թվականին աշխատավարձի տնտեսված միջոցների հաշվին մարզպետարանի աշխատակիցներին 13-րդ աշխատավարձ չի վճարվել և վճարման համար գումար չի նախատեսված:

2019 թվականի պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված է 93190.5 հազ. դրամ: Փաստացի ծախսը 2019 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ կազմել է 83804.0 հազ. դրամ:

2019 թվականին պետական բյուջեից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով նախատեսված գումարների հաշվին մարզպետարանի քաղաքացիական ծառայողները համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա պարգևատրվել են նաև հունվար և հուլիս ամիսները: Վերը նշված հոդվածով կատարված ծախսը կազմում է 36890.7 հազ. դրամ: Նշված պարգևատրումը քաղաքացիական ծառայողներին վճարվում է դեռևս 2002 թվականից:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

կատ. Շ.Ճշմարիտը
հեռ. /0322/ 2-43-04